



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 փետրվարի 2018 թվականի N 22 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ  
2018 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի N 5-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2018 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց և Աճարկուտ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացվելիք հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 16-ի N 01/17.1/107-17 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության

բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ



8 փետրվարի 2018թ.

ք. Իջևան

**Հավելված**

ՀՀ Տավուշի մարզպետի

8 փետրվարի 2018 թ. Թիվ 22-Ա որոշման

2018 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց և Աճարկուտ համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող խաչտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Կիրանց	1-ին եռամսյակ	բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Քևորգյան Գուրգեն Հարությունյան Գագիկ Մատինյան Աշոտ Մարդանյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան Համլետ Փիրումյան
2.	Աճարկուտ		բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, աղբահանություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Քևորգյան Գուրգեն Հարությունյան Գագիկ Մատինյան Աշոտ Մարդանյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան



ԱՇԽԱՏԱՍԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԳԵԿՈՐԳՅԱՆ